ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 621-Ա

20 հոկտեմբերի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ Կ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԵՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հերմինե Պետրոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Հերմինե Պետրոսյանին տրամադրել 2025-2026 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասից 6 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ (6 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Հերմինե Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի Կ. Գևորգյանի անվան

միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Սարգսյանին (առանց վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

20.10.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840303

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ